ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 115, 22.04.2016թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,277,501 հատ,	40,000 հատ	240.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Աշոտ Օսիպյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		22.04.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

22 ապրիլի 2016 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի ապրիլի 20-ի թիվ 07/08Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ 0102- N07/08L
Դաս: ՀՊ
«20» ապրիլի 2016թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Թողարկել պարտատոմսեր 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 40,000 (քառասուն հազար) հատ, 36 (երեսունվեց) ամիս մարման ժամկետով, տարեկան 7.0 (յոթ) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով բաց բաժանորդագրությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել 2016 թվականի հունիսի 06-ին ժամը 09:00-ին և ավարտել 2016 թվականի հունիսի 17-ին ժամը 16:00-ին:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը բաժանորդագրության ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

4. Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

5. Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկած 36 (երեսունվեց) ամիս անց:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	Որոշում Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին	Կոդ: ՈՐԽ 0102 - N07/08Լ Դաս: ՀՊ Ամսաթիվ: «20» ապրիլի 2016թ.

Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

6. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի հունիսի 03-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ. Ուզունյան